

Կ-134²-31.10.2012, 01.02.2013-ՊԻ-010/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

Հոդված 1. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-126-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետից հանել «և «Դատախազական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության» բառերը:

Հոդված 2. Օրենքի 34-րդ հոդվածի՝

1) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը Արդարադատության ակադեմիայում անցնում է ուսումնառության ծրագիր:».

2) 10-րդ մասում «ազատվում է» բառից հետո լրացնել «Արդարադատության ակադեմիայում» բառերը.

3) 11-րդ մասի «Դատախազության դպրոցում» բառը փոխարինել «Արդարադատության ակադեմիայում» բառերով:

Հոդված 4. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «դատախազության դպրոցում» բառերը փոխարինել «Արդարադատության ակադեմիայում» բառերով:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 35.1 հոդվածով.

«Հոդված 35.1. Դատախազների թեկնածությունների ցուցակից թեկնածուին հանելու հիմքերը

1. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը գլխավոր դատախազի կողմից հանվում է ցուցակից, եթե.

- 1) նա նշանակվել է դատախազի պաշտոնում,
- 2) նա դիմում է այդ մասին,
- 3) լրացել է նրա 65 տարին.
- 4) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
- 5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտով ապացուցված է, որ նա ընդգրկվել է ցուցակում օրենքի պահանջների խախտմամբ.
- 6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած.
- 7) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը կամ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով.
- 8) ի հայտ է եկել դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն,
- 9) Արդարադատության ակադեմիայում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքում ստացած քննական միավորը պակաս է կուրսը հանձնված համարելու համար Խորհրդի կողմից սահմանված նվազագույն միավորից կամ չի անցել օրենքով նախատեսված փորձաշրջանը.
- 10) Արդարադատության ակադեմիայում ուսումնառության ընթացում անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 20 տոկոսից.
- 11) Արդարադատության ակադեմիայում ուսումնառության ընթացում ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 50 տոկոսից:»:

Հոդված 5. Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասությունում «, ավարտելով ուսումնառությունը, դատախազական դպրոցում հաջողությամբ հանձնել են որակավորման քննությունը կամ սույն օրենքի 34-րդ հոդվածի 10-րդ մասի հիման վրա ազատված են եղել դատախազական դպրոցում ուսումնառությունից» բառերը

փոխարինել «ավարտել են համապատասխան ուսումնառությունը Արդարադատության ակադեմիայում կամ սույն օրենքի 34-րդ հոդվածի 10-րդ մասի հիման վրա ազատված են եղել Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից» բառերով:

Հոդված 6. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասում «կարգով» բառից հետո լրացնել «՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան» բառերը:

Հոդված 7. Օրենքի 62-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 8. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասով Արդարադատության ակադեմիային և Արդարադատության ակադեմիան ավարտած անձանց վերաբերող դրույթները տարածվում են նաև դատախազական դպրոցի և դատախազական դպրոցում ուսումնառություն անցած անձանց նկատմամբ: